



## Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»ի այս թիւի պատրաստութիւնը կը զուգադիպի Լեռնային Ղարաբաղի ազատատենչ ժողովուրդի ամենածանր օրերուն, երբ անոնք պարտադրաբար, անգամ մը եւս, հռչակուած զինադադարէն 22 տարիներ ետք, դէմ-յանդիման գտնուեցան արեան սուղ գին վճարելով պաշտպանելու մեր պապենական հողերը, յանուն ազատութեան եւ ազգային ինքնորոշման վեհ գաղափարին:

Մեծ ցաւով եւ սակայն հիացմունքով տեղեկացանք մեր արի ու մարտունակ ազատամարտիկներուն տարած հերոսական դիմադրութեան մասին, անսպասելի հակահարւածը տալով պատերազմատենչ ազերի ու թուրք ժողովուրդի վարձկաններուն: Զեռուստառնկերութիւններու միջոցով ականատես եղանք այնպիսի արտայայտութիւններու, որոնք յստակ կերպով մեզի փոխանցեցին հետեւեալը, թէ Արցախցին վճռած է ի՛ր ձեռքով վերջնականապէս լուծել տարիներ առաջ կիսատ թողած հողատարածքներու ի՛ր արդար իրաւունքի հարցը, օրինակ հանդիսանալով այլ ժողովուրդներու:

Այն ժողովուրդը, որ մահէն չի վախճար, կ'ապրի ու կ'ապրեցնէ: Այն ազգը, որ բարձր կը դասէ մահը կեանքէն կը զոյատէւէ: Իմացեալ մահը անմահութիւն է...

Վերոնշեալ նախաբանով պարտք զգացի իմ կարգիս ձեզ ողջունելու, սիրելի կիպրահայեր եւ հայրենակիցներ: Սրտանց կ'աղօթեմ, որ այս անգամ գտնուի հրաշք ու յարատեւող լուծում մը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին

առնչութեամբ, առանց յաւելեալ արիւնահեղութեան, որպէսզի ժողովուրդը ապրի խաղաղ ու բարուք կեանք մը:

Նիւթը փոխելով կը շարունակեն:

Պաշտօնավարութեանս երկրորդ շրջանի հինգ տարիներուն ընթացքին, «Լրատու»ի եռամսեայ հերթական հրատարակութեամբ, շարունակեցի յստակ ու թափանցիկ գործունէութիւնս, միեւնոյն ժամանակ, առիթը ունեցայ ձեզի հետ կիսելու զիս մտահոգող, մեր հայրենիքն ու Արցախը ապակայունացնող եւ այս կղզիէն ներս մեր ապագան տնօրինող հարցերը:

Յաջորդող շաբաթներուն, պիտի ստանաք երկրորդ շրջանի պաշտօնավարութեանս ընթացքին ձեռքբերուած հիմնական իրագործումներու եռալեզու գրքոյկը: Պիտի տեսնէք, թէ հոն կան ամբողջացած ու շոշափելի արդիւնքի հասած աշխատանքներ, սակայն կան նաեւ չամբողջացած եւ ժամանակի կարօտ հարցեր, որոնք պէտք է հետապնդուին միասնական գործակցութեամբ, հասնելու համար վերջնական լուծումի:

Յետեւաբար, եթէ կը փափաքինք ըլլալ արդար ու ընդհանուր գիծերու մէջ արժեւորում մը կատարել, պիտի տեսնենք, թէ վերջին հնգամեակին, կիպրահայութիւնը ա՛լ աւելի միասնական է քան երբեք, Պետական Ներկայացուցիչին կապերը առաւել եւս սերտ են բոլոր կողմերու, կառոյցներու եւ կազմակերպութիւններու հետ: Երեսփոխանական Գրասենեակ ներկայացող գաղութի անդամներուն եւ հայրենակիցներուն, անխտիր, առաւելագոյն չափով օժանդակութիւն կը ցուցաբերուի, հարկ եղած պարագային՝ խորհուրդներ կը տրուին, տարբեր տեսակի հարցերու մէջ լաւագոյն լուծումը ապահովելու համար: Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հետ կապերը ամուր հիմքերու վրայ են, Հայաստանի ու Արցախի իշխանութիւններուն հետ հաստատուած են մտերիմ յարաբերութիւններ,

իսկ Կիպրոս-Հայաստան փոխգործակցութիւնը կը գտնուի ամենաբարձր մակարդակի վրայ:

Բոլոր այս իրագործումները ի մտի ունենալով եւ ընդառաջելով կիպրահայութեան մեծամասնութեան փափաքին, որոշեցի թեկնածութիւնս առաջադրել երրորդ շրջանի մը համար, խոստանալով նոյն թափով եւ նուիրուածութեամբ աշխատիլ, ի շահ մեր գաղութի ու հայրենիքի բարօրութեան:

Գալով մեր եռամսեայ գործունէութեան յիշեմ, թէ Փետրուար 13-ին, մասնակցեցայ Պէյրութի մէջ զումարուած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինի կազմակերպած երկօրեայ խորհրդածոյովին, որուն մասին անդրադարձ կատարած եմ «Լրատու»ի այս թիւով:

Մարտ 15-ին, երկօրեայ պաշտօնական այցելութեամբ Կիպրոս ժամանեց ՀՀ նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեան. մանրամասնութիւնները նշուած են «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Ապրիլ 20-ին, Նիկոսիոյ Համալսարանի UNESCO սրահին մէջ տեղի պիտի ունենայ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով հրատարակուած գիրքին շնորհահանդէսը: Ասոր կողքին, տեղի պիտի ունենան Ցեղասպանութեան 101-րդ ոգեկոչման աւանդական դարձած ձեռնարկները, որոնց, վստահ եմ, պիտի բերէք ձեր մասնակցութիւնը:

Իսկ Շաբաթ, Մայիս 7-ին, Ստրովոլոսի քաղաքապետարանի սրահին մէջ, ելոյթ պիտի ունենան Համազգայինի «Սիփան» եւ Երեսփոխանական Գրասենեակի «Նանօր» պարախումբերը: Յոյսով եմ, որ խումբերան ներկայութեամբ պիտի քաջալերէք մեր երիտասարդներն ու փոքրիկները:

Յիշեցնեմ նաեւ, թէ Մայիս 8-ին, դարձեալ պիտի այցե-

լենք Մակարայ վանք մեր ուխտը վերանորոգելու, եթե անհրաժեշտ հրամանը օրին ապահովուի, որ ինչպես միշտ կ'իրականացուի համագործակցութեամբ Ազգային Իշխանութեան:

Սիրելիներ,

«Լրատու»ի այս թիւին հրատարակութեամբ, ամբողջացուցած եղայ երկրորդ հնգամեայ գործունէութեանս տեղեկատուութիւնը: Շնորհակալութիւն ձեր բոլորին, իմ ու գրասենեակիս հանդէպ ցուցաբերած վստահութեան համար:

**Վարդէս Մահտեսեան**

**Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Հպատակութիւն

2016 տարուան առաջին եռամսեակին, քառանդամ ընտանիք մը Լիմասոլէն եւ եռանդամ ընտանիք մը Նիկոսիայէն, ինչպէս նաեւ 3 անհատներ տարբեր քաղաքներէ, որոնք երկար տարիներ օրինաւոր բնակութիւն հաստատած էին Կիպրոս՝ ստացան հպատակութիւն:

### Շնորհաւորական եւ բարեմաղթութեան գիրեր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 4 Յունուար 2016-ին անհատական նամակներ յղելով, իր ու կիպրահայութեան անունով շնորհաւորեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի, Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի, ՀՀ Յունաստանի, Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Գագիկ Ղալաչեանի, ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի, Արցախի Թեմի Առաջնորդ Տ. Պարգէս արքեպիսկոպոս Մարտիրոսեանի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի Նոր տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով անոնց քաջառողջութիւն եւ արեւշատութիւն, իսկ Հայաստանին ու Արցախին՝ խաղաղութիւն եւ հիմնահարցերու բարւոք լուծում:

Պրն. Վարդգէս Մահտեսեան, 12 Յունուար 2016-ին, յատուկ գիրով մը շնորհաւորեց եւ փայլուն ապագայ մաղթեց Սիմոնէ Աննա Արաճեանին, Edexcel GCSE քննութիւններուն, Design and Technology նիւթին մէջ, Եւրոպայի ամենաբարձր նիշը ապահովելուն առիթով:

### Կիպրահայ գաղութի կեանքէն եւ այլ ձեռնարկներ

Կիրակի, 3 Յունուար 2016-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Համազգայինի Կիպ-

րոսի Օչական Մասնաճիւղի «Պիմակ» թատերախումբի «Ես Պարոնեանն Եմ» զաւեշտին, բեմադրութեամբ Յարութ Թահնազեանի, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ:

Շաբաթ, 16 Յունուար 2016-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Հ.Ս.Ը.Ս.–Հ.Ե.Ս.-ի Վարչութեան կազմակերպած ճաշկերոյթին, որու ընթացքին պարգևատրուեցան 2015-ի Համահայկական խաղերու մետալակիրները եւ այն մարզիկները, որոնք 2015-ին յաջողութիւններ արձանագրած էին:

Կիրակի, 17 Յունուար 2016-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Մելգոնեան անմահ բարերարներու յիշատակին մատուցուած Հոգեհանգստեան պաշտօնին: Ապա, Պետական Ներկայացուցիչը, Նիկոսիոյ հոգեւոր հովիւ Տէր Մոմիկ Քահանայի եւ ազգայիններու ընկերակցութեամբ, այցելեց Մելգոնեան բարերարներու դամբանը՝ իր յարգանքի տուրքը մատուցելու:



Չորեքշաբթի, 20 Յունուար 2016-ին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչին նախաձեռնութեամբ, Ազգային Իշխանութեան, Քաղաքական Կուսակցութիւններու եւ Սիութիւններու ներկայացուցիչները յատուկ նիստ մը գումարեցին Ազգային Առաջնորդարանին մէջ, գեկուցելու, միտքեր փոխանակելու եւ առաջարկներ ներկայացնելու, Կիպրական հարցի լուծման գծով ընթացող բանակցութիւններու լոյսին տակ՝ կիպրահայ համայնքի ապագայ կարգավիճակին մասին:

Հինգշաբթի, 4 Փետրուար 2016-ին, Տ. Եփրեմ Սրբազան Թապագեան (Քուէթի նախկին առաջնորդ), Կիպրոս գրտնուելու առիթով, այցելութիւն մը տուաւ Պետական Ներկայացուցիչին եւ կէսօրին հիւրասիրուեցաւ անոր բնակարանին մէջ:

Հինգշաբթի, 11 Փետրուար 2016-ին, Զ.Մ.Ը.Մ.-ի Լիբանանի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Սկրտիչեան, Զ.Մ.Ը.Մ.–Յ.Ե.Մ.-ի ատենապետ Յակոբ Գազանձեանի ընկերակցութեամբ, տեսակցութիւն մը ունեցաւ Պետական Ներկայացուցիչին հետ:

Չորեքշաբթի, 17 Փետրուար 2016-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Համազգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած մշակութային երեկոյին, որ տեղի ունեցաւ Զ.Մ.Ը.Մ.–Յ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

Կիրակի, 6 Մարտ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Զ.Օ.Մ.-ի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած աւանդական Միջինքի ճաշին, որ տեղի ունեցաւ Զ.Մ.Ը.Մ.–Յ.Ե.Մ.-ի ակումբի սրահին մէջ:

Նոյն օրը երեկոյեան, Պրն. Վարդէս Մահտեսեան, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Նիկոսիոյ Անգլիական Վարժարանի շրջանաւարտներու միութեան կազմակերպած՝ «Հիմնադիր Քանոն Ֆրանք Նիւհամի

մահուրն է 70 տարիներ ետք» յիշատակի ձեռնարկին, որ տեղի ունեցավ շրջանաւարտներու ակումբի սրահին մէջ:

Հինգշաբթի, 10 Մարտ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրական Լրատուական Գործակալութեան (Cyprus News Agency) կազմակերպած՝ «Կիպրական Հարցը եւ Ջանգուածային Լրատուական Միջոցները. Բարոյագիտութիւն եւ Տեղեկատուութիւն» զեկոյց-հաւաքին, որ տեղի ունեցաւ Լրագրողներու Միութեան դահլիճին մէջ:

Ուրբաթ, 18 Մարտ 2016-ին, Տէր եւ Տիկին Վարդէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանի Ազգային Վարչութեան կազմակերպած՝ Ֆամակուսթայի Կանչուորի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նուիրուած ձեռնարկին, որ տեղի ունեցաւ «Վ. Իւթիճեան» սրահին մէջ: Բանախօսն էր, Դոկտ. Միքայէլ Ուալչի, Սինկափուրի Նանեանկ ճարտարարուեստի Համալսարանէն:

Հինգշաբթի, 31 Մարտ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Կիպրոսի Պետական Համալսարանի եւ Պրն. Վարդէս Մահտեսեանի աջակցութեամբ կազմակերպուած՝ «Ակնարկ. Լեռնային Ղարաբաղի ընթացիկ իրավիճակին» նիւթով դասախօսական երեկոյին, որ ներկաներուն փոխանցեց Երեւանի Պետական Համալսարանի Մշակութային Ուսումնասիրութեան բաժնի ղեկավար եւ հնաբան Դոկտ. Համլէթ Պետրոսեանը: Յիշենք, թէ Դոկտ. Պետրոսեանի առաջին դասախօսութիւնը Կիպրոսի Պետական Համալսարանին մէջ, տեղի ունեցած էր Երեքշաբթի, 29 Մարտին, որ Լեռնային Ղարաբաղի Տիգրանակերտ քաղաքի պատմական մեծ արժէք ներկայացնող հնութիւններուն մասին էր:

Շաբաթ, 2 Ապրիլ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ երգչախումբերու տարեկան համերգին, որ տեղի



ունեցաւ Նիկոսիոյ «Փալլաս» սրահին մէջ:

**Պաշտօնական մակարդակի  
հանդիպումներ եւ ձեռնարկներ**

Ուրբաթ, 15 Յունուար 2016-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ ու իր խօսքը փոխանցեց Պատմական Երկխօսութեան եւ Հետազօտութեան Ընկերակցութեան կազմակերպած «Նիկոսիան. բաժնուած եւ վիճարկելի քաղաքի մը պատմութիւնը» խորագիրով միջոցառումին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Home for Cooperation-ին մէջ:



Երեքշաբթի, 19 Յունուար 2016-ին, Պրն. Վարդգէս Մատեսեան հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մօտ նշանակաւծ Իրլանտայի դեսպան Նիքոլաս Թուխթի հետ:

Շաբաթ, 30 Յունուար 2016-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ ՏԻՍԻ եւ Համայնքային Ժողովրդավար Կուսակցութիւններու կազմակերպած «Միացեալ Կիպրոս» երկհամայնքային ձեռնարկին, որ տեղի ունեցաւ

Նիկոսիոյ Լիտրա փողոցի սահմանին վրայ: Այս միջոցառումին, կիպրահայ համայնքը ներկայացուցին Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ երէցներու երգչախումբն ու Յանազգայինի «Սիփան» պարախումբը:

Հինգշաբթի, 11 Փետրուար 2016-ին, Խորհրդարանի Լիագումար նիստի ընթացքին, նախագահ Նիկոս Անաստասիատիս լուսաբանական զեկուցում մը տուաւ խորհրդարանի անդամներուն, մինչեւ օրս տեղի ունեցող բանակցութիւններու ընթացքին ու հոլովոյթին մասին, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Պետական Ներկայացուցիչը:

Ուրբաթ, 12 Փետրուար 2016-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ լրագրող Դոկտ. Եաննոս Խարալամպիտիսի «The Rage of War» գիրքի ներկայացումին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ: Այս Ձեռնարկին ներկայ էին Եւրոպայի Հայ Դատի Գրասենեակի տնօրէն Գասպար Կարապետեան, Եւրոներեսփոխան Էլէնի Թէոխարուս, ինչպէս նաեւ մեծ թիւով յոյն կիպրացի հասարակութիւն մը:

Չորեքշաբթի, 17 Փետրուար 2016-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ ՀՀ նախագահի արարողակարգի պետի տեղակալ Արշակ Մանուկեանի, հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնակատարներուն հետ, նախապատրաստելու Մարտ ամսուան մէջ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի կատարելիք երկօրեայ այցելութիւնը Կիպրոս եւ քննելու հայկական խաչքար մը տեղադրելու կարելիութիւնները՝ Արտաքին Գործոց Նախարարութեան շրջափակէն ներս:

Չորեքշաբթի, 2 Մարտ 2016-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Խորհրդարանի կազմակերպած՝ «Պոնտոսի Իրաւունքի Յիշատակում» խորագիրով, Պոնտոսի համայնքին նուիրուած բազմազան նիւթերու ցուցահանդէսի բացումին, որ տեղի ունեցաւ «Պիլի

Ամոխոստոս»ի սրահին մէջ:

Երկուշաբթի, 7 Մարտ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Պաշտպանութեան նախարար Խրիստոֆորոս Ֆոկայիտիսի հետ, զօրակոչիկներու բանակի ծառայութեան կրճատումի եւ այլ հարցերու առնչութեամբ:



Չորեքշաբթի, 9 Մարտ 2016-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մօտ վերջերս հաւատարմագրուած Ֆրանսայի դեսպան Ռէնէ Թրոքքազի հետ:

Երեքշաբթի, 22 Մարտ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Chateau Status-ի մէջ տեղի ունեցած ընդունելութեան, որ կազմակերպուած էր Կիպրոսի մօտ Մալթայի Ինքնիշխան Ուխտի դեսպանատան կողմէ, որու դեսպանն է հայազգի Edward Mier-Jędrzejowicz-ը, իսկ դեսպանատան կցորդը՝ փաստաբան Ժոզէֆ Յատճի-հաննան:

Երեքշաբթի, 29 Մարտ 2016-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Խորհրդարանի լիագումար նիս-

տին, որու ընթացքին ելոյթ ունեցաւ Եւրոխորհրդարանի նախագահ Սարթին Շուլց: Նոյն գիշերը, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ նաեւ նախագահ Նիկոս Անաստասիատիսի սարքած ճաշկերոյթին՝ ի պատիւ նախագահ Շուլցին, որ տեղի ունեցաւ նախագահական պալատին մէջ:

### Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդաժողով



Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի համանախագահ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 13-14 Փետրուարին մեկնեցաւ Պէյրութ, մասնակցելու Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինի կազմակերպած Սիջին Ա-

րելելեան երկիրներու եզրափակիչ երկօրեայ խորհրդածո-  
ղովին, որ տեղի ունեցաւ Անթիլիասի Մայրավանքի «Կիլի-  
կիա» թանգարանին մէջ, ներկայութեամբ ՀՀ Սփիւռքի նա-  
խարար Հրանուշ Յակոբեանի: 13 Փետրուարին, խորհրդ-  
դածողովի բացումը կատարեց Հայոց Տեղասպանութեան  
100-ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմնի փոխ-  
ատենապետ Շահան Գանտահարեան, որմէ ետք ելոյթ ու-  
նեցաւ ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան: Օրա-  
կարգի գործադրութիւնը շարունակուեցաւ մասնակից եր-  
կիրներու ներկայացուցիչներու զեկուցումներով: Կիպրա-  
հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Մահտես-  
եան հակիրճ կերպով անդրադարձաւ փոքրաթիւ կիպրա-  
հայ համայնքի կազմակերպած ձեռնարկներուն եւ պատ-  
մական արժէք ներկայացնող իրագործումներուն, արժա-  
նանալով ներկաներուն բարձր գնահատանքին:

14 Փետրուարի առաւօտեան, մասնակիցները ներկայ  
գտնուեցան Անթիլիասի  
Մայրավանքին մէջ մա-  
տուցուած Ս. Պատարա-  
գի արարողութեան, որմէ  
ետք ՀՀ Սփիւռքի նախա-  
րար Հրանուշ Յակոբեան,  
ՀՀ Լիբանանի դեսպան  
Աշոտ Քոչարեան եւ Կիպ-  
րահայ Համայնքի Պետա-  
կան Ներկայացուցիչ  
Վարդգէս Մահտեսեան,  
ծաղկեպսակներ զետեղե-  
ցին Տեղասպանութեան  
նահատակներու ածիւն-  
ները ամփոփող մատու-  
ռին դիմաց:



Կէսօրէ ետք միստը շարունակուեցաւ յաւելեալ զեկուցումներով, իրագործումներու արժեւորումներով եւ ապագայի առաջարկներու ներկայացումներով ու իր լրումին հասաւ երեկոյեան ժամերուն, Վեհափառ Հօր՝ Արամ Ա. կաթողիկոսի արտասանած պատգամով:

### ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի երկօրեայ այց



Երեքշաբթի, 15 Մարտ 2016-ին, երկօրեայ պետական մակարդակի այցելութեամբ եւ մեծ պատուիրակութեամբ մը, Կիպրոս ժամանեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան: Լառնաքայի օդակայանին մէջ զինք դիմաւորեցին Կիպրոսի Պաշտպանութեան նախարար Խրիստոֆորոս Ֆոկայիտիսը եւ Կիպրոսի Համայնքի Պետական Ներկայացուցիչը:

Երեկոյեան ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան դիմաւորեցաւ Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիսի կողմէ եւ նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական արարողութիւն, ուր հնչեցին

գոյգ երկիրներու քայլերգերը եւ տեղի ունեցաւ պաշտօնական պատուիրակութիւններու ծանօթացում: Ապա, երկու նախագահները դռնփակ հանդիպում մը ունեցան, որուն յաջորդեց ընդլայնուած կազմերով հանդիպում: Այս հանդիպումներէն ետք, ստորագրուեցան տարբեր համաձայնագիրներ կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ոլորտներէն ներս, փոխադարձ համագործակցութեան եւ բարձր կրթութեան որակաւորման ճանաչման առնչութեամբ:

Նոյն գիշերը, նախագահական պալատին մէջ ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ ի պատիւ նախագահ Սարգսեանին, որուն հրաւիրուած էին ներկայ գտնուելու Պետական Ներկայացուցիչն ու կիպրահայ համայնքի պատկան մարմիններու ներկայացուցիչները:

Յաջորդ օրը առաւօտեան, նախագահներ Անաստասիատիս եւ Սարգսեան, պաշտօնական բացումը կատարեցին հայկական խաչքարին, որ տեղադրուեցաւ Կիպրոսի Արտաքին Գործոց Նախարարութեան արարողակարգի բաժանմունքի շրջափակին մէջ: Նշենք, թէ խաչքարը գործն



է ճարտարապետ Ռուբէն Նալպանտեանի, որ իր տիկնոջ հետ ժամանած էր Կիպրոս ներկայ գտնուելու բացման արարողութեան:

Խաչքարի տեղադրման արարողութենէն ետք, նախագահ Սերժ Սարգսեան մեկնեցաւ Խորհրդարան եւ հանդիպեցաւ Խորհրդարանի նախագահ Եաննակիս Օմիրուի, ապա Արքեպիսկոպոսարան՝ տեսակցելու արքեպիսկոպոս Խրիստստոմոս Բ.-ի հետ:

Նախագահ Սարգսեան, այցելեց նաեւ Նիկոսիոյ Նարեկ Յայկական Վարժարան ու ծաղկեպսակ գետեղեց Ապրիլեան յուշակոթողին առջեւ, ինչպէս նաեւ կարճ հանդիպում մը ունեցաւ կիպրահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ, Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ:

Կէսօրին, Պետական Ներկայացուցիչը իր բնակարանին մէջ, ճաշկերոյթ սարքեց ի պատիւ նախագահ Սերժ Սարգսեանին ու անոր գլխաւորած պատուիրակութեան:

Նոյն օրը երեկոյեան ՀՀ նախագահը դասախօսութիւն մը տուաւ Կիպրոսի Պետական Համալսարանին մէջ «Հա-





յաստանի քաղաքական օրակարգը անկախութեան 25-ամեակի նախօրեակին» խորագիրով: Նախքան դասախօսութիւնը, բացման խօսքով հանդէս եկաւ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան:



Դասախօսութենէն ետք, նախագահ Սարգսեան անմիջապէս մեկնեցաւ Լառնաքայի օդակայան՝ ընկերակցութեամբ Պետական Ներկայացուցիչին:

ՀՀ նախագահի այս այցելութեամբ, առաւել եւս ամրապնդուեցան եւ զօրացան երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող սերտ յարաբերութիւնները քաղաքական, տնտեսական եւ կրթական ու մշակութային բնագաւառներն ներս:

### **Զօրակցական գիրեր**

Երկուշաբթի, 4 Ապրիլ 2016-ին, Պետական Ներկայացուցիչը իր ու կիպրահայութեան անունով, զօրակցական գիրեր յղեց Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակ-

եանին, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանին եւ Արցախի Թեմի Առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանին, դատապարտելով թշնամիին նենգ յառաջխաղացքը ի դիմաց՝ Լեռնային Ղարաբաղի ազատատենչ ժողովուրդի պապենական հողերը արեան գնով պաշտպանելու հիանալի մարտունակութեան եւ յանուն ազատ ինքնորոշման վեհ գաղափարին համար մղած հերոսական պայքարին՝ օրինակ հանդիսանալով այլ ժողովուրդներու:

Նոյնպէս, Պրն. Վարդգէս Մահտեսեանի գլխաւորութեամբ, կիպրահայ համայնքի Ազգային Իշխանութեան, Քաղաքական Կուսակցութիւններու եւ Միութիւններու պատուիրակութիւն մը, բողոքագիրներ յանձնեց ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի հինգ մնայուն անդամ պետութիւններու՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Ռուսիոյ Դաշնութեան, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Չինաստանի դեսպաններուն, դատապարտելով Ազրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի վրայ իրագործուած վերջին բռնարարքները եւ յարձակողապաշտ քաղաքականութիւնը:



### **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Կը փափաքիմ յայտարարել մտադրութիւնս, թեկնածու ներկայանալու Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչի պաշտօնին համար, յառաջիկայ Խորհրդարանական ընտրութիւններուն, որոնք պիտի կայանան Մայիս 22, 2016-ին:

Պատիւ մը պիտի ըլլայ ինձի համար, եթէ կիպրահայ գաղութը ինձի վստահի այդ պարտականութիւնը եւ առիթը ընծայէ՝ որ պաշտօնավարութեան շրջան մը եւս ծառայեմ համայնքիս: Կը փափաքիմ նաեւ վստահեցնել բոլորին, թէ պիտի շարունակեմ աշխատիլ յանձնառութեամբ եւ անաչառօրէն, լաւագոյնս ցուցաբերելով ո՛չ միայն ի նպաստ մեր գաղութը յուզող հարցերուն, այլ նաեւ՝ Հայաստանի եւ Արցախի:

Թարմացնելու համար «Լրատու»ի  
 հասցեացանկը, Կիպրահայ գաղութի  
 անդամներին եւ մեր  
 հայրենակիցներին կը խնդրուի կապ  
 հաստատել Երեսփոխանական  
 Գրասենեակին հետ հեռաձայնելով  
 22454540 թիւին, ճշդելու համար  
 բնակարաններու հասցէները եւ կամ  
 տեղեակ պահելու այլ  
 փոփոխութիւններու մասին:

*Շնորհակալութիւն*

## **ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

### **Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
 Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
 Ել. Հասցէ office@armenianmp.com  
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### **Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
 Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy